

Կերմանացի Թոպլէր գիտնականը անձամբ կատարած է այդ վանքին աւերակաց ուսումնասիրութիւնը և սա եզրակացութեան եկած է թէ այդ աւերակները նշաններ ցոյց տուած են հեռաւոր հնութեան մը, մինչեւ Ե. կամ նոյն իսկ Դ. դար. իր խօսքերն են. « Պատերը խիստ թանձր են, և ցարդ անմլաս մնացած կամարները՝ չատ հաստատուն: Պատերը՝ այնչափ հաստատուն են որ կարելի է ըսել թէ անոնք տասնհինգ դարեր կարողացած են տոկալ եւ զերծ մնալ փլուզումէ: Զափեցի անկիւնաքար մը՝ որ ունէր երկու մէթր երկարութիւն, վաթսուն սանթիմէթր բարձրութիւն և նոյնքան թանձրութիւն:

Աւանդութիւնը՝ այս հաստատութիւններուն համար ընտրած է խիստ սեպածե զառիվայր մը՝ որ թոյլ չկրնար տալ միեւնոյն հաւասարութիւնը ունեցող գետնի մը վրայ հաստատել մեծ շէնք մը: Մենք հոն ճշգրտիւ չգտանք երկյարկանի շէնքի մը գոյութիւնը: Գուարէսմիոս՝ լատին կրօնաւորը նոյն վանքը կը նկատէ երկու մասի բաժնուած շինութիւն մը. կարելի է եզրակացնել թէ կային հոն ստորնայարկ շէնք մը, դէպի հիւսիս, եւ վերնայարկ շինուածք մը, դէպի հարաւ, մին միւսին ետեւը, խիստ զանազան հաւասարութեամբ, այսպէս որ՝ ստորնայարկ եկեղեցիէն վերնայարկ եկեղեցին կրնային ելնել սանդուխի մը միջոցաւ»: (*Séu Topographie Von Jerusalem*. Հտր. Բ. Պերլին, 1854. էջ 355-356):

Բ. Երբ, 1861ին, նոյն վանքին ու եկեղեցւոյն գետինը կատարելապէս մաքրուած էր, և ստորնայարկը նորոգուած, անգլիացի Գոնտէր եւ Քիլնէր անոնց մասին հետեւեալ տեղեկագիրը ներկայացուցին. «Այն Սիրրի Մարիամ ըսուած աղբիւրին արեւմուտքը, հարաւային բլուրին վրայ, և ռուսական նորաշէն հիւրանոցին խիստ մօտիկ, լատինք՝ 1861ին, աւերակներ գտած են, երբ կը շինէին Զաքարիայի գիւղական տան նոր մատուռը: Գետինը մաքրուած էր 15-20 ոտք խորութեամբ և գտած են հին եկեղեցւոյն ստորին յարկը, Յովհաննէս Բոլոնբրի յիշատակութեան համաձայն. վասն զի նոյն ուխտաւոր ուղեգիրն էր որ 1422ին, կը գրէր թէ Այնքեարիմի վանքը ունէր ստորերկրեայ մատուռ մը և վերնայարկ եկեղեցի մը...: Հոն ցոյց կը տրուի այն վէմը, որ մօմի պէս կակուղնալով, պատասպարեց փոքրիկն Յովհաննէս Մկրտիչ, Հերովդէսի զինուորներու հալածանքէն: